# ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #1

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Լուծի՛ր այս խնդիրը և պատասխանը արտահայտիր նույն ձևաչափով:



| | |
|---|---|
| Պատասխան | Պատասխան:  (մեկ անգամ, 1) կամ որևէ այլ տարբերակ:<br>Տեքստը գրված է թայերեն լեզվով և ցուցադրված է գլխիվայր: Թարգմանությունը հետևյալն է.<br>“Յոթ լվացումից հետո օճառի երկարությունը, լայնությունը և բարձրությունը կիսով չափ կրճատվեցին։ Եվս քանի՞ անգամ կարելի է լվանալ օճառի մնացորդով:” |

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #2

## ՃԱՆԱՉԵՆՔ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

Անվանեք այս աշխարհագրական «թռչունի» մոտ գտնվող լիճը: Այն գտնվում է ներքևում պատկերված վանքից 18,8 կմ հեռավորության վրա:




| | |
|---|---|
| Պատասխան | Ակնալիճ (40°16'58.8"N 44°55'14.2"E).<br>Աշխարհագրական «թռչունը» գտնվում է Կոտայքի մարզի Կապուտան գյուղի Կապտավանք եկեղեցուց 18,8 կմ հեռավորության վրա: |

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #3

## ՄՏԱԾԵՆՔ ՏՐԱՄԱԲԱՆՈՐԵՆ

Չորս ընկերներ՝ Մարգարյանը, Մարկոսյանը, Մարտիկյանը և Մարտիրոսյանը, յուրաքանչյուրն ունի մեկ դուստր, սրճարան և ռեստորան: Ընկերներից յուրաքանչյուրը իր երկու բիզնեսն անվանել է մյուս երեք ընկերների երկու տարբեր դուստրերի անուններով: Կրկնօրինակ անուններ չկան ինչպես չորս սրճարանների միջև, այնպես էլ չորս ռեստորանների միջև: Օգտագործելով հետևյալ պնդումները՝ պարզեք, թե ով է չորս ընկերներից յուրաքանչյուրի դուստրը (մեկ դուստրի անունը Մարինե է), և որոնք են յուրաքանչյուր սեփականատիրոջ բիզնեսների անունները:

1) Մարտիրոսյանի ռեստորանը կրում է այն սեփականատիրոջ դստեր անունը, որի անունով նույնպես կոչվում է Մարգարյանի սրճարանը:
2) Ո՛չ Մանուշակ Մարգարյանը, ո՛չ Մարիամ Մարտիրոսյանը պաղպաղակ չեն սիրում.
3) Մարտիրոսյանի սրճարանը կրում է այն սեփականատիրոջ դստեր անունը, ում ռեստորանը կոչվում է Մանուշակ:
4) Մարտիկյանի ռեստորանը, որի անունը Մարգարիտա չէ, կրում է այն սեփականատիրոջ դստեր անունը, ում սրճարանը կոչվում է Մարիամ:
5) Մարկոսյանի ռեստորանը ոչ Մարիամ է կոչվում, ոչ էլ նրա սրճարանը՝ Մանուշակ:

Պատասխան

| ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ | ԴՈՒՍՏՐ | ՍՐՃԱՐԱՆ | ՌԵՍՏՈՐԱՆ |
|---|---|---|---|
| Մարգարյան | Մանուշակ | Մարգարիտա | Մարիամ |
| Մարկոսյան | Մարինե | Մարիամ | Մանուշակ |
| Մարտիկյան | Մարգարիտա | Մանուշակ | Մարինե |
| Մարտիրոսյան | Մարիամ | Մարինե | Մարգարիտա |